բևեռս և յարևմուտս ձգուած ճիւղն, որ կանցնի Խամուրայ հարաւից, կը վերջանայ Խաթաուն անուամբ, ի միջավայրս Մանազկերտի և Բաղնոցայ։

Խամուրայ հիւսիսից կը հոսի Մուրատ յարևմուտս և միանալով Շեռեանայ, կը դառնայ ի հարաւ, քերելով այս վայրի արևմտեան եզրն. որով ընթերցողք կարողացան հասկանալ որ յարևելից և հարաւից պատած են ծաղկանց լեռներն, ի հիւսիսից Մուրատ և յարևմտից Արածանին։

Ահա պատուական վայր մի, որ կղզիացած է լեռներու և ջրոց միջավայրն, ապահով թշնամական յարձակումներէ։

Արդ ես կը հաւատամ որ այս վայրը ի նախնիս մեծ գործեր կատարուած են, այս տեղ լինելու է Անգղ և Շահապիվան, արդէն այստեղ է Ցամբաղ և Շոշկայ հռչակաւոր բերդն, Սիւլէյման գումբէթ ասուած ի հնուց մնացած բերդաքաղաքն, Աղ-դէվէ կոչուած բլուրներու գագաթն գտնուած բերդօրայք, հայկական ամենակարևոր հանգստարանք և հսկայ տապանաքարեր և դեռ մի մեծ կամուրջի հետքերն կերևին Մուրատի վերայ, մերձ Կօլասօր գիւղին։

Այժմեան կառավարութիւնը երեք մասի բաժանած է այս բնական բաժանումն ունեցող վայրն, Գարա-Քիլիսէի Անդափ գաւառին և Դիատին գաւառին ուստի թէև հեռի և անջատուած Նպատէ ի հարաւ տարածուող լեռներով [1]։

---

1. Թ. Գալէի յԱրծէշ գնալու համար 5 ժամից Զատօ Շեռեան անցնելով ուստի Մուրատ անցնելով Խտրտոթք 2 ժամ. Շոշկայ ջուրն անցնելով ցՄալխաս 1 ժ. Սէիտխան ըէկ 1 ժ. Խաչլու 1 ժ. աստի բարձր Ալատաղ է։ Ղարաուլ 1 ժ. եւ 4 ½ ժ. Իրիշատայ կամուրջն, ուստի յԱրծէշ։